

ԹԵ Ի՞ՆՉ ՊԱՏՄԵՑ ԹՐԵԲՈՆԵՄԸ

ԿԱՄ Ի՞ՆՉ է ՍԻՖԻԼԻՍԼ(*)

«Ինծի դիմեցիք երբ արդէն երկրորդական շրջանի վլրքեր ունէիք, և ձեր արեան քննութիւնն ալ գրական էր, այսինքն արիւնը և ներքին գործարանները վարակուած էին. Տարիէ մը ի վեր կը դարմանեմ ձեզ: Այս պայմաններուն մէջ երեք տարի վերջ միայն կրնաք ամուսնանալ, պայմանով որ լրջօրէն շարունակէք դարմանումը և մինչեւ այդ ատեն ոչ վէրք ունենաք և ոչ ալ արեան կամ ողնաջուրին մէջ հիւանդութեան հետքը մնայ:

«Եթէ չարկեղի երեւան գալին անմիջապէս ետք, առաջին 10-12 օրուայ շրջանին ինծի գիմած և սկսած ըլլայիք դարմանումը, այն ատեն երբ արիւնը գեռ վարակուած չէր, փոխանակ չորս տարիի, երկու աարիէն կրնայիք ամուսնանալ, կանոնաւոր և գորաւոր դարմանումի ենթարկուելու պայմանով:

— «Եթէ կէտ առ կէտ հետեւիմ ձեր խորհուրդներուն և այդ երկարատեւ դարմանումին, կրնա՞մ վստահ ըլլալ թէ յետագային հիւանդութիւնը երեւան չպիտի գայ և զաւակներու առողջ պիտի ծնին:

— «Այս. ամէնօրեայ փորձառութիւնը այդ կը հաստատէ: Բայց լաւ է որ ֆրանկախտաւոր մը միշտ զգոյշ ըլլայ և ինչպէս շատեր իրենց անձը պատահական արկածներու դէմ կ'ապահովագրեն, գիտնալով հանդերձ թէ 99% արկածի չպիտի ենթարկուին, այնպէս ալ լաւ դարմանուած ֆրանկախտաւոր մը պատաւոր և ինքզինքը ապահովագրել սիֆիլիսի նոյնիսկ անհաւանական արկածի մը դէմ: Առոր համար պէտք է որ, 1. պարբերաբար քննութեան ենթարկուի. 2. ամուսնանալէ առաջ եւ մանաւանդ ամուսնանալէ յետոյ, զաւակ ունենալէ առաջ, 2-3 ամիս դարմանուի եւ 3. յղութեան միջոցին իր կինը դարմանել տայ:

«Ամէն պարագայի տակ, որքան ատեն որ ֆրանկախտաւորի մը արմատապէս բուժուած ըլլալը հաստատող գիտակտն միջոց մը չէ գտնուած, ան, զօրաւոր, կանոնաւոր եւ երկարատեւ դարմանումի ենթարկուելով հանդերձ, պարագային համեմատ երկու կամ չորս տարիէ առաջ պէտք չէ ամուսնանայ: Եթէ այդ պայմանաժամէն առաջ ամուսնացած է, պէտք չէ զաւակ ունենայ, եւ եթէ կինը պատահաբար յղի մնայ, պէտք է զայն դարմանել տայ յղութեան շրջանին:

(*) Ցես քրութանքի նախորդ Թիւերը կամ նոյն խորագրով գրքոյկը:

«Ասկէ զատ ֆրանկախտաւոր մը պարտի իր սիֆիլիսէ վարակումն ըլլալը յայտնել բժիշկին, ամէն անդամ որ կասկածելի հիւանդութիւն մը կամ ախտանիշ մը երեւան զայ, իր կնոջ կամ զաւակներուն վրայ:

«Սիֆիլիսը շատ ծանր հիւանդութիւն մըն է անոնց համար որոնք չեն դարմանուիր կամ գէշ ու անկանոն կը դարմանուին:


«Սիֆիլիսը շատ թիթեւ հիւանդութիւն մըն է անոնց համար որոնք զօրաւոր, կանոնաւոր և երկարատես դարմանումի ենթարկուելու համբերութիւնը կ'ունենանաւ:

Երիտասարդ զոհս համոզուած երեւոյթով մը մեկնեցաւ բժիշկին քովին: Սակայն քիչ յետոյ ինքնիրեն կ'ըսէր. «Ամիսներէ ի վեր ոչ ցաւ ունիմ, ոչ վէրք, արիւնս ալ մաքուր է. ալ ինչո՞ւ չպիտի ամուսնանամ:

Ահա թէ ինչպէս՝ կը շատնան զոհերս և կը տարածեմ տիրապետութիւնս մարգկութեան վրայ:

(Տարունակելի)

ԲԺ. Լ. ԳՐԻԳՈՐԵԱՆ



Հ. Ս. Ը. Ի. ՊԱՏԿՍ.
Ժ Ո Ղ Ո Վ Ը

Սեպտեմբեր 16—20, Փարիզի մէջ գումարուեցաւ Հ.

Ս. Ը. Ս. Արևմտեան Երոպայի Երգանային ժողովը, որուն կը մասնակցիին նաև ՀՕԿի մարզական մասնաճիւղերը և Հայ Մարզական միութիւնը:

Պատգ. ժողովը տուաւ անմիջական և դրական արդիւնք մը, այն է՝ զանազան անուններու տակ իսու ու ինն ցրուած, ու ատոր հետեւանդրով իսկ հայ մարզական կեանքը ամուլ դարձնող, բազմաթիւ մարզական միութիւններու ծուլումը Հ. Ս. Ը. Ս. ի դրաշին տակ:

Մասնաւոր գոհունակութեամբ կ'արձանագրենք մարզական ուժերու միացման իրողութիւնը և կը շնորհաւորենիք Պատգ. ժողովը այս յաջողութեան համար, որ առաջին քայլը կը կազմէ դէպի գործնական ու արդիւնաւոր աշխատանք:

Այս առնիւ բանից մեր տեսակետը յայտնած ենք, բասծ ևնք որ Հ. Ս. Ը. Ս. ի նապահելը պէտք է ըլլայ ոչ թէ ախոյեաններ կազմել, այլ ֆիզիքական կրթութիւն տալ ամրող սերունդին: Իր ծրագիրն իսկ այս կը տրամադրէ: Սեպտ. 18ի տարեկան ոլիմպիականը, միամիներուն նման, մեծ մասամբ ծանօթ ախոյեաններու տողանցք մը եղաւ: Կը յուսանք որ նորմնտիք Երջ. Վարչութիւնը, Հ. Ս. Ը. Ս. ի բուն ծրագրին իրականացումը կը հիւանդանդէ, և յառաջիկայ Սեպտեմբերին մեզ ցոյց կուտայ ոչ թէ ախոյեաններ, այլ հարիւրաւոր մարգիլներ և առողջ երիտասարդութիւն մը: Առ այդ յաջողութիւն կը մալթենք: